

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԿՆԵՐԸ V դարի ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Ա. Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

V դարի հայ նամակագրական նյութերի շարքում մեծ թիվ են կազմում նամակի ձևով գրված պաշտոնական փաստաթղթերը, որոնք ավանդված են հայ պատմիչների երկերում:

Ցույց տալու համար, թե ինչ տեղ է զբաղեցնում պաշտոնական նամակը կամ նամակի ձևով գրված պաշտոնական փաստաթուղթը V դարի հայ նամակագրության ընդհանուր համակարգում, կարևոր է ընդհանուր նամակային ավանդույթի համապատկերում պաշտոնական փաստաթուղթ-նամակների (լի-նեն վավերական թե անվավեր) խաղաղած դերի և նշանակության ներկայացման հարցը: Ծագումնաբանորեն պաշտոնական նամակի կոնկրետ դրսևորումները նախորդել են նրա գործնական շարադրման համար հետագայում ստեղծված տեսական աշխատասիրություններին, որոնց նպատակն է եղել կանոնավորել ու գիտականորեն կարգավորել պաշտոնական նամակի գրության կոնկրետ սկզբունքները: Այս առիթով Հեյկկի Կոսկենենիեմին գրում է, որ պաշտոնական նամակի «հիմնադրությունները ավելի վաղ շրջանի են վերաբերում, քան հենց ճարտասանության ծնունդն է, և գրողի տեսական պատրաստվածություն հետքերը երևում են արդեն իսկ վաղ հրապարակված նամակային փաստաթղթերում»: Նամակագրության պատմամշակութային ընդհանուր հոլովույթի մեջ պաշտոնական նամակի հանդես բերած կարևոր առանձնահատկությունն այն է, որ այն սկզբնապես բնություն չի առնվել անտիկ նամակի տեսության համընդհանուր համակարգում, չի թրծվել տեսական բնույթի աշխատությունների քուրայում, այլ ինքնուրույն ուժերով, «ներսից» է ենթարկվել կարգավորման ու մշակման: Պաշտոնական նամակի առաջին տեսական հիմնավորումը, այն էլ՝ անձնական-բարեկամական նամակների առնչությամբ, ինչպես ցույց է տալիս Կոսկենենիեմին, կատարվել է Դեմետրիոսի (մ. թ. I դար) նամակագրական ձեռնարկում: Պաշտոնական նամակի նկատմամբ այսօրինակ անուղղորդ վերաբերմունքի պատճառն այն է, որ անտիկ նամակի տեսությունը նամակ-երևույթը ընկալում էր զուտ նեղ անձնական բնույթի հարաբերությունների վավերացման տեսակետից:

Յ. Սիկուտրիսը նամակի տիպերի տեսակավորման իր մշակած համակարգում (որը հիմնականում համընկնում է Հ. Հունգերի, Կոսկենենիեմի, Ջիաձկոյի կողմից կատարված աստիճանաբաժանումներին) հետևյալ կերպ է սահմանում նրա առանձնահատկությունները. «Պաշտոնական նամակը միջին տեղն է զրավում մասնավոր և գրական նամակների միջև, որովհետև այն ուղղված է բազմաթիվ հասցեատերերի, հրապարակայնություն է ստանում և կազմվում է կրթված անձանց կողմից»<sup>2</sup>: Այսօրինակ նամակները մեծ քանակությամբ վկայված են հունական պապիրոս-նամակների ժողովածուներում, ինչպես նաև Քսենոփոնի, Թուկիդիդեսի, Արիստոփանեսի և այլոց պատմական ու գեղարվեստական բնույթի ստեղծագործություններում: Հ. Հունգերը, նշելով պաշտո-

<sup>1</sup> H. Koskeniemi. Studien zur Idee und Phraseologie des griechischen Briefes bis 400 n. Chr., Helsinki, 1956, S. 48.

<sup>2</sup> J. Sykutres. Epistolographie.—In: Paulys Realencyclopädie der classischen Altertums—wissenschaft, Supplementband V, München, 1931, S. 195.

նական նամակի գործառական ոլորտները, գրում է, որ դրանք «գործնական առիթներով են գրված և հասցեագրված են իշխանության օրգաններին (գերատեսչություններին) կամ պաշտոնական անձանց»<sup>3</sup>։ Պաշտոնական գրագրության աշխուժացման ու նրա նշանակության կարևորման (անտիկ շրջանի համեմատությամբ) մի ավելի բարձր կետ է համարում Սիկուտրիսը հելլենիստական միապետություններում իրականացվող դիվանական ոճի ու գրագրությունների ծավալման փաստը. «Ոչ միայն արտաքին հաղորդակցությունը, այլև ողջ ներքին վարչական կառավարումը իրականացվում էր նամակների միջոցով, մի սովորույթ, որը դալիս է Արևելքից»<sup>4</sup>։ Այս վերջին վկայությունը հաստատում է, որ հայ պատմիչները պետք է քաջածանոթ լինեին վարչական կառավարման իրականացման այնպիսի մի կարևորագույն միջոցի հետ, ինչպիսին նամակն էր, մասնավորապես որ Հայաստանը կանգնած էր արևմուտքի և արևելքի մշակույթների խաչաձևման կենտրոնում։ Ուրիշ հարց է, սակայն, թե արդյո՞ք մեր պատմիչներին միշտ է հաջողվել իրենց օգտագործած պատմական նյութի հարստացման համար վավերագրեր ձեռք բերել, թե՞ բավարարվել են միայն պատահականորեն իրենց ընձեռնած օրինականների և իրենց տեսական պատրաստվածության համադրմամբ այդ գրագրությունները վերակազմելով։

V դարի հայ պատմիչների կողմից վկայված գրեթե բոլոր նամակի ձևով գրված հաղորդագրությունները վերաբերում են պաշտոնական գրագրությունների բնագավառին։ Բացառություն են կազմում Բյուզանդի կողմից ավանդված որոշ նամակային պատառիկները, հորենացու «Պատմության» մեջ վկայված՝ առ Սահակ Բագրատունի գրված ձոն-թուղթը, Արշակի՝ Գնեղին գրած երկտող-նամակը (չնայած որ ինքը՝ հորենացին, այն կոչում է հրովարտակ) և մի քանի ուրիշ փաստեր։ Ըստ իրենց բնույթի բոլոր պաշտոնական գրագրությունները ունեն իրավական միտվածություն, իսկ ըստ գործառական կարգի առանձնահատկությունների դրանք կարելի է խմբավորել երկու մեծ ենթաբաժինների մեջ. ա. ներքին կառավարչական խնդիրներին վերաբերող նամակի ձևով գրված պաշտոնական փաստաթղթեր և բ. արտաքին քաղաքական շրջանների հետ տարվող գրագրություններ՝ նույնպես նամակի ձևով գրված։ Սակայն այս երկու կարգի գրություններում կառուցվածքային-ձևական ոչ մի առանձնահատկություն նկատելի չէ, պարզապես գրում էին նամակ (թուղթ, հրովարտակ և այլն) այսինչ բովանդակությամբ (արտոնագիր, խնդրագիր, պայմանագիր և այլն)։ Ձևական տարբերակումների շփոթը գործում է նաև բյուզանդական պաշտոնական նամակագրության, ինչպես և նրա տեսության մեջ։ Այս առիթով Ֆ. Դյուլգերը գրում է. «Բյուզանդացիները... առանձին փաստաթղթերի ձևերը ոչ միշտ էին խստիվ տարբերակում, ավելի հաճախ միևնույն տեսակի փաստաթուղթ կիրառում էին տարաբնույթ ձևաբանությունների համար»<sup>5</sup>։

V դարի հայ պատմագրության փորձում պաշտոնական փաստաթղթերը վկայված են մի քանի անուններով, որոնք հիմնականում պատահականորեն են տրված նման փաստաթղթերին՝ առանց որոշակիորեն տարբերակելու այդ գրություններն ըստ իրենց ձևական և անգամ գործառական բնույթի առանձնահատկությունների։ Պատմիչները ամենաբազմաբնույթ պաշտոնական փաստաթղթերը հիմնականում կոչում են թուղթ, նամակ, գիր, երբեմն էլ՝ գրություն։ Սրանք բոլորը վերաբերում են գրավոր հաղորդակցության իրականացման ամենաընդհանուր, չեզոք կարգի անվանումների ոլորտին։ Թուղթ, նամակ, գիր անվանումները պարզապես մատնանշում են տվյալ պաշտոնական,

<sup>3</sup> H. Hunger. Die hochsprachliche profane Literatur der Byzantiner. Bd. 2, München, 1978, S. 203.

<sup>4</sup> J. Sykutres. Op. cit., S. 196.

<sup>5</sup> Fr. Dölger und J. Karayannopoulos. Byzantinische Urkundenlehre. Die Kaiserurkunden.—In: Handbuch der Altertumswissenschaft, I. Bd. I. Abschnitt, München, 1968, S. 24.

ուղեական նախաձեռնության գրավոր արտահայտության փաստը: Պատմիչների մոտ պաշտոնական գրություններին տրվող միակ քիչ թե շատ տարբերակվածը հրովարտակ անվանումն է, բայց այն ևս խիստ հարաբերականորեն է մասնավոր, տարբերակված գործածություն ստանում. և պատմիչների մոտ հիմնականում կրում է սույն գրավոր հաղորդումի իմաստը, ինչը որ ունեն նամակը, թուղթը, դիրքը:

Բյուզանդական կայսերական փաստաթղթերի ուսումնասիրող Ֆրանց Դյուլգերը հավաստում է, որ անտիկ շրջանի և միջնադարի համար «փաստաթղթերի կեղծումները սովորական կանոն էին դարձել»<sup>6</sup>: Անտիկ և միջնադարյան դեղագիտության կողմից այդ երևույթը ամեն կերպ խրախուսվում էր և խնդիր էր դրվում ազատ վերաշարադրել, վերապատմել, ոճական նույն հայտարարի բերել բոլոր տեսակի գրությունների ընդմիջարկումը ինչպես պատմության մեջ, այնպես էլ գեղարվեստական երկերում (էպոս, ողբերգություն, կատակերգություն): Միակ բացառությունը, ուր գործում էր պաշտոնական փաստաթղթերի տառացի փոխադրության սկզբունքը, վերաբերում էր գիտական գրականության բնագավառին, որը, սակայն, իր առջև ոչ մի գրական, մարտասանական կամ ոճական խնդիր չէր դնում: Ընդհակառակը, պաշտոնական փաստաթղթերի տառացի ընդմիջարկումը պատմության համակարգում հեղինակային ինչ-ինչ նպատակներից ելնելով էր միայն տեղ գտնում, ինչը Սիկուտրիսը համարում է տվյալ հեղինակի ստեղծագործության «անկատարելության մի նշան, որը բխում է թուլացած ոճական զգացումից, ինչպես որ որոշ քրիստոնեական գրողների մոտ է»<sup>7</sup>: Պաշտոնական փաստաթղթերի ընդմիջարկման տեխնիկան իր կատարելությանն է հասնում Թուկիդիդեսի Պատմության մեջ և այնուհետև, ինչպես նշում են հետազոտողները (Զ. Հագեն, Ֆ. Դյուլգեր, Յ. Կարայաննուպուոս, Յ. Սիկուտրիս), պաշտոնական փաստաթղթերի ընդմիջարկումը, ազատ վերաշարադրանքով ու հեղինակային ոճավորումով հանդերձ, մուտք է գործում պատմագրության արվեստի մեջ՝ անհրաժեշտ բաղադրիչի իրավունքով: Հետազոտողները այս հարցում նկատում են նախնախնի անտիկ ճարտասանության մեջ ընդունված բարաոնության սկզբունքից, որը հրամայաբար պահանջում էր ըստ հնարավորին հարազատ մնալ ընդօրինակության առարկային: Պատմագիրները իրենց առջև խնդիր են դնում՝ հանուն սեփական երկի ոճական միասնության պահպանման զանց առնել բարաոնության սկզբունքը և անուշադրության մատնել դեպքերի ու դժբերի զուտ անհատական, մասնավոր բնույթի արտահայտման մեջ խորամուխ լինելու հանգամանքը: Թուկիդիդեսից հետո պատմագրության փորձում, որպես մի չգրված կանոն, հաստատվում է պաշտոնական գրագրությունների ազատ վերաշարադրման ու ոճավորման սկզբունքը:

Սակայն ընդմիջարկված թուղթը հորինովի նամակի դրսևորումների նախնական աստիճանն է, հին մատենագիրների, կոպիտ ասած, միամտության հետևանք: Սա այն դեպքն է, երբ տվյալ հեղինակին վերագրած նամակները գոնե այն ձևով և ոճավորությամբ չեն գրված եղել, ինչպես մեզ փորձում են ներկայացնել (հաճախ էլ՝ նույնիսկ չգիտակցելով այդ հանգամանքը) պատմագիրները: Ծնշող մեծամասնություն են կազմում այն նամակները, որոնց ո՛չ կարծեցյալ հեղինակը, ո՛չ էլ հասցեատերը գոյություն չեն ունեցել: Դրանք այսպես կոչված հորինովի, կեղծանուն նամակներն են, որոնց վերաբերյալ իր դիտողություններում անտիկ և հելլենիստական շրջանների բանասիրությունը, ի սկզբանե ընդունելով դրանց փաստացի գոյությունը, խրախույս է կարդացել և փորձել է այն ներկայացնել իբրև ոճական կատարելության դրսևորման մի հատուկ բնագավառ: Միաժամանակ անտիկ բանասիրությունը (Դիոգենես Լաերտցի) և քրիստոնեական գրականության առաջին ներկայացուցիչները

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 22, 23:

<sup>7</sup> J. Sykutres. Op. cit., S. 209.

(Եվսեբիոս Կեսարացի, Ավդուստինոս, Հիերոնիմոս) զբաղվել են թղթերի վավերականության հարցերով: Եվսեբիոս Կեսարացին, օրինակ, որի երկերը հայերեն են թարգմանվել դեռևս V դարում, ուղղակի ականարկություններ ունի այն մասին, որ ոմանց դեռ շատ առաջ զբաղեցրել է նույնիսկ առաքելական թղթերի վավերականության հարցը, որոշակի սկզբունքներից ելնելով հաստատվել ու կասկածի են ենթարկվել Պողոսի, Պետրոսի և այլոց թղթակցությունները: «Ձեռնարկներ թուղթ մի, այն որ առաջին կողի ընդունելի գիտեմք. որով նախնի հարք, իբրև առանց երկմտութեան ստէպ վարեցան ի գիրս իւրեանց: Եւ որ երկրորդն կոչի՝ և ոչ ընդ գիրս անգամ սուրբս կարգեալ ի հարց անտի ընկալաք... Իսկ Պողոսի յայտնի են և քաջածանօթ շորեքտասան թուղթքն, բայց մերժեցին ոմանք զթուղթն եբրայեցոց ասելով՝ եթէ եկեղեցին Հռովմայեցոց ընդունի զայն ընդ հարադատ դրութիւնս Առաքելոյս...»<sup>9</sup>:

Հայ իրականության մեջ ականարկություններ են արվել հորենացու, Եղիշի, Կաղանկատվացու և այլոց պատմություններում պահպանված թղթերի վավերականության վերաբերյալ, սակայն հարցի գիտական համակողմանի քննությունը դեռ չի կատարվել: Մալխասյանցը, օրինակ, անվավեր է համարում հորենացու «Պատմության» մեջ վկայված նամակները, դրանք մեծ մասամբ «ստեղծել է ինքը, հորենացին, այն բովանդակությամբ ու ձևով, ինչպես որ, նրա կաթիլքով, նրանք պետք է գրված լինեին, եթե իրոք գրվեին»<sup>9</sup>: Աբեղյանը այս հարցի առիթով գրում է. «հորենացու Պատմության մեջ բավական տեղ է բռնում նաև նամակային տեսակը կամ նամակային ոճ ասածը (genre epistolaire, style épistolaire), որը գրելու, հորինելու մի առանձին եղանակ, կերպ է: Փոխանակ պատմելու իրողության մասին կամ անելու որևէ թղթի-նամակի, հրամանի բովանդակությունը, նույնն ասվում է իսկական նամակի գրության, հրամանագրի ձևով: Դա պատմվածքին բազմազանություն տալու մի ոճ է միայն իրեն հատուկ արտահայտության ձևերով: Եվ իզուր պատմաբաններն այդպիսի գրությունների մեջ ուզում են տեսնել վավերագրեր, և երբ այդ շեն գտնում, մեղադրում են Քերդոզին»<sup>10</sup>: Այս դրույթները միանգամայն ընդունելի են: Հետաքրքիր է Աբեղյանի այն միտքը, որ Եղիշիի մոտ պահպանված Միհրանեսի հրովարտակում և հայերի գրած պատասխան թղթում «ճարտարությամբ ամփոփված են նույն գաղափարները, մասամբ գրեթե նույն ձևով, ինչ որ Եվսեբի Կոդբացու հակաճառության մեջ, ինչ որ ինքը՝ Եղիշեն, սովորեցնել է կամենում քրիստոնեության և մաղղականության վերաբերմամբ: Դրանով նա քրիստոնեական կրոնի ջատագովությունն է անում և պարզում սրա գերադանցությունը մոգական կրոնից: Այդ էլ հենց հարկավոր է եղել նրան»<sup>11</sup>: Հրաշյա Աճառյանը Մեսրոպ Մաշտոցի կենսագրության հետ վկայված խնդիրների առնչությամբ քննելով հորենացու «Պատմությունից» մեզ հայտնի Մահակ կաթողիկոսի գրած երեք թղթերը՝ ժխտում է նրանց վավերականությունը գուտ պատմականության տեսակետից. «...անկարելի է նաև, որ հորենացու մեջ բերած թղթերը լինեն իսկական օրինականները, քանի որ անհավանական է կարծել, թե հորենացին կարողանար ձեռք գցել դրանք. ուստի պետք է ընդունել, որ պատմագիրը իրանից է շարագրել ենթադրաբար: Նամակների պարունակությունը, այն է Հայաստանի ձգնաժամը, Սահակի նեղությունը և Հունահայոց մեջ ապավեն փնտրելը՝ արդեն անստույգ դեպքեր են, ուստի բնականաբար նամակների գրությունն էլ դառնում է անստույգ»<sup>12</sup>:

<sup>9</sup> Էսեբիոսի Կեսարացու Պատմություն եկեղեցույ. Վենետիկ, 1877, էջ 146—148:

<sup>10</sup> Մ ո վ ս ե ս հ ո Ր ե ն ա ջ ի. Հայոց պատմություն, խմբ., ներած. և ծանոթ. Ս. Մալխասյանցի. Երևան, 1981, էջ 53:

<sup>11</sup> Մ ա ն ու կ Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. 9, Երևան, 1968, էջ 321:

<sup>12</sup> Ե ո Ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց գրերը. Երևան, 1984, էջ 197—198: Նույն պատճառաբանությամբ էլ Աճառյանը մերժում է Թեոդոս Կալսեր և Կ. Պոլսի պատրիարք Ատտիկոսը՝ Սահակի գրած պատասխան թղթերի վավերականությունը. «հորենացու մեջ բերած հիշյալ երկու նամակ-

Ընդհանրապես բնօրինակ, վավերական պաշտոնական փաստաթղթեր շատ քիչ են ավանդված ինչպես անտիկ, այնպես էլ միջնադարյան շրջաններից: Ֆրանց Դյուրերը պարզաբանում է, որ ընդհանրապես պաշտոնական փաստաթղթերի ավանդումը կատարվում է երեք եղանակներով. մի գեպքում մենք գործ ունենք «նմանողական ընդօրինակությունների հետ» (*copia imitativa, copie figurée*), որոնք ճշգրտորեն, նույնիսկ արտաքին մանրամասներով ընդօրինակում են բնագիրը», երկրորդ գեպքում՝ «պարզ պատճենումները, որոնք հիմնականում վերարտադրում են փաստաթղթի բովանդակությունը, սակայն ոչ միշտ փաստաթղթի բոլոր ձևական հատկանիշները... երրորդ խումբը, որի միջոցով փաստաթղթերը (հավանաբար բնօրինակը) մեզ են հասել՝ կեղծումներն են. դրանք այն փաստաթղթերն են, որոնք հենց իրենք հորինողներն են կազմում և ջանում են ներկայացնել որպես բնօրինակ»<sup>13</sup>: V դարի հայ պատմագրության միջոցով մեզ ավանդված պաշտոնական փաստաթղթերը բացառապես վերաբերում են երկրորդ և երրորդ խմբերին:

Հայ պատմագրության մեջ թղթերի օգտագործման հաջորդական հարմարեցում է քննել պատմիչների գեղագիտական իդեալի տեսակետից: Սակայն այստեղ բավարարվենք սոսկ հորինումների զրգապատճառների խնդրով: Հորինումի դրդապատճառները խիստ տարբեր են և բազմաթիվ: Խնդիրն այն է, որ հորինումները կարող են լինել հեղինակի կողմից գիտակցված և ոչ գիտակցված (առանց որևէ գիտավորության): Ոչ գիտակցված հորինումների լավագույն օրինակը Փավստոս Բուզանդի կողմից վկայակոչված նամակներն են, որոնք, սակայն, ազատ կերպով վերաշարադրում է նա, երբեմն քաղվածաբար տողեր է բերում նամակներից, երբեմն էլ՝ ամբողջական հատվածներ: Բայց նա շունչ իր նպատակի հստակ գիտակցում և այդ հատվածները բերում է կարծես հենց այնպես, առանց խստորեն զանազանելու նամակագրական հատուկ ժանրի և կանոնի ստիպողական պահանջները: Փավստոսի համար իր կողմից վկայակոչված նամակային սյուսետները զուտ տեղեկություն տալու միջոց են: Բուզանդի մոտ հանդիպող ցաք ու ցրիվ, կարծես պատահական ընտրությամբ մեջբերված նամակային կտորները բխում են նրա՝ որպես պատմագրի գեղագիտական ըմբռնումներից: Երբեմն դժվար է զանազանել, տվյալ հատվածը հորինված է, թե՞ պարզ վերաշարադրություն: Պատմիչի համար միևնույն է, թե իր հաղորդումը ինչ ոճական ու կիրառական ոլորտներում է գործառույթ, ժանրային ինչ յուրահատկություններ ունի, կառուցված լուր տալն է, բուն հաղորդումը՝ անկախ ձևական և կառուցվածքային հատկանիշներից, որոնք կարող են սկզբունքորեն փոխել ասված խոսքի, տեղեկության գեղագիտական ընկալումը, որը կարող է նաև տեղաշարժեր մտցնել անգամ խոսքի ինֆորմատիվ կողմի մեջ, ինչը հրաշալիորեն գիտակցում էր Մովսես Խորենացին:

Առանց գիտավորության (ոչ գիտակցված) հորինումների մի կարևորագույն սկզբունքը կապված է բարաոնության ճարտասանական հնարանքի գործադրման հետ: Յ. Սիկուտրիսը գրում է, որ այդ ճարտասանական հնարանքի նպատակն է ցուցադրել «նշանավոր անձնավորությունների ներշնչումը որոշակի հայտնի իրադարձություններում: Դրա գրավչությունը կայանում է փաստերի սուբյեկտիվ ներկայացման և հերոսների բնավորության հայելալիկ արտապատկերումը նրանց բառերով ու արտահայտություններով հաղորդելու մեջ»<sup>14</sup>: Ղաղար Փարպեցու «Պատմության» մեջ դրա օրինակներ կան և՛ հերոսների արտասանած ճառերում, և՛ գրագրությունների ձևով: Փավստոսը նույնպես իր հերոսներին երբեմն խոսեցնում է նրանց ուղղակի խոսքի մեջբերումով, բայց

ները իրականության մեջ ամենին չլին կարող գոյություն ունենալ, և են միայն արդյունք Լրեվակայության... մանավանդ այն պատճառով, որ նրանց պարունակությունը հակասակ է պատմության» (նույն տեղում, էջ 205):

<sup>13</sup> Fr. Dölger und J. Karayannopoulos. Op. cit., S. 25—27.

<sup>14</sup> J. Sykutres. Op. cit., S. 212.

այդ էրևույթը իր մյուս թևով կապվում է նմանակման ճարտասանական հնարանքի հետ, երբ տվյալ անձնավորությանը ձգտում են ներկայացնել իր կողմից ուղղակի արված հայտարարություններում՝ լինի ճառի, թե քարոզի, թղթի, թե մի այլ կարգի ժանրային կառույցի ձևով:

V դարի հայ պատմագրության համակարգում առավել հաճախադեպ են և, ըստ էության, պատմիչների գեղագիտական իդեալի հետ ամենասերտ առնչություն մեջ են գտնվում միտումնավոր թույլ տրված հորինումների կամ պարզ վերաշարադրումների օրինակները, որոնք առավելագույնս բացահայտում են տվյալ հեղինակի երկի պատմագեղարվեստական միտվածությունը, միաժամանակ մեզ համար ավելի դյուրին ու հնարավոր են դարձնում հորինումների առանձին օղակների ցուցադրումը:

Միտումնավոր հորինումների մեկնակետը և միաժամանակ նպատակակետը՝ տվյալ նամակի հորինման կամ վերախմբագրման ջատագովական-ապացուցական միտումն է, որից և սկիզբ են առնում հորինովիության և նամակագրի կեղծանունության դրսևորման այն բոլոր փաստական միավորները, որոնք մեզ ձեռքում գործիք են ծառայում այս կամ այն նամակի վավերականությունը պարզելու խնդրում: Ուսումնասիրողները միաբերան պնդում են, որ տեքստից շատ դժվար է ենթադրել այն միտումնավորությունը, որը գործում է նամակի րնդհանուր հյուսվածքում: Այս հարցում ամենակարևոր բացահայտիչը ջատագովական միտումն է, որն ինչ-որ տեղ նույնիսկ ծնող մոր դեր է խաղում ամբողջական նամակների հորինման համար: Ջատագովական այդ միտումը հիմնականում գործում է այն ժամանակ, երբ խնդրո առարկա անձը կամ իրադարձությունը, թվականը և այլն, և այլն վիճարկելի են, իսկ պատմիչի նպատակն է իր գեղագիտական, դուռ անձնական ու գաղափարական ձգտումներին բավարարող եզրակացություններ անել, ուստի և դիմում է նամակների վկայակոչված օգնությանը: Ջատագովական միտումի առարկան կարող է լինել հեղինակի հայրենասիրությունը, պատմվածքին ճշմարտացիություն հաղորդելու ձգտումը, քրիստոնեական կրոնի պաշտպանությունը և այլն: Յ. Սիկուտիսը ջատագովական միտվածության կարևորագույն նպատակն է համարում հետևելը. «Հաճախ նամակների և այլ փաստաթղթերի հորինումը կատարվում է անվիճարկելի իրավունքներին կամ հայացքներին, կարծիքներին պատմական հեղինակություն հաղորդելու համար: Դրանք ընկալվում էին որպես պայքարի միջոց...»<sup>15</sup>: Հայ դավանաբանական նամակի պատմությունը սրա լավագույն վկայությունն է: Օրինակ. «Գիրք թղթոց» ժողովածուում Մովսես Խորենացուն և Հովհան Մանգակունուն վերագրված, բայց իրականում VI դարի գործիչներ Մովսես Եղիվարդցու և Հովհաննես Գաբազենացու գրած թղթերը նպատակ են հետապնդել դավանաբանական վեճերի շրջանում ծագած տեսակետներին հեղինակություն հաղորդել: Հորինումը կամ վերագրումը կատարվել է այս հիմքի վրա:

Հորինումը կարող է թելադրված լինել նաև նմանակման պահանջից: Կարելի է վերահիշյալ առանց դիտավորության թույլ տված հորինումները համարել հեղինակների մոլորության արդյունք, այնքանով, որ քանով որ հեղինակները չունեն այն բանի հստակ գիտակցություն, որ և՛ փաստերի ազատ վերաշարադրումը, և՛ բարառնության սկզբունքին հետևելը, և՛ նմանակման ձգտումը բոլորն էլ հավասարապես վերաբերում են ազատ վերաշարադրությունների, հորինումների բնագավառին: Եվ, հետևաբար, գիտավորյալ, որոշակի գեղագիտական նպատակադրումով թույլ տված հորինումները (թե՛ նամակի ամբողջական հորինումները, թե՛ մասնակի խմբագրումներն ու խեղաթյուրումները) կարելի է համարել սուբյեկտիվ դիտավորությունների մի բնագավառ, որի առանձին օղակների քննությանն էլ մենք այժմ անցնում ենք:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 211:

Տվյալ նամակի հորինովիության առաջին հատկանիշը հետևյալն է. երբ նամակագիրը մեջ է բերում այնպիսի տեղեկություններ, որոնք հասցեատիրոջը պետք է որ ծանոթ լինեին և ղրանց հիշատակումը (մի ավելորդ անգամ ևս) կատարվում է փաստորեն միայն հրապարակման նախատեսված նամակի վրա ընթերցողի ուշադրությունը գրավելու համար: Դրանք հիմնականում կապվում են աշխարհագրական տեղանունների, անձնանունների, տոհմանունների, տիտղոսների, այլևայլ պատվանունների, թվականների ներկայացման փաստերի հետ: Օրինակ, Շապուհ III-ի կողմից հայոց վրա արքա կարգված խոսրովը հայ նախարարներին գրած պատասխան թղթում մի մասնավոր դիմումով հայտնում է Գաղավոնին. «Եւ զքեզ, Գաղատն, արին իմ և հարազատութիւն, ոչ ըստ վաղընչուց ազգականութեանն, այլ ըստ արդեանս, որ ի մօրէ բումմէ Արշանուշայ Արշակունւոյ, հանեալ զքեզ ի հայրենեաց քոց Կամսարականաց, և ի մայրենիս քո յիմս առեալ ազգ՝ Արշակունի անուամբ պատուեցից» (Խոր., գիրք III, գլ. ԽԸ): Խորենացու մոտ անքան ուժեղ է արտահայտված միջնական վերջ իրողությունը պարզաբանելու երևույթը, որ ակնհայտորեն պարզ է դառնում, որ նամակի գոնե այդ հատվածը Շապուհը գրել է ոչ թե Գաղավոնի (որը շատ լավ գիտեր իր՝ մոր և հոր կողմից ինչ տոհմերի պատկանելը, կամ հենց խոսրովի Արշակունի լինելու հանգամանքը), այլ իր և Գաղավոնի ծագումնաբանության հարցերով հետաքրքրվողների համար:

Երբ Խորենացին Սահակ Բագրատունուն իր «Պատմության» վերջում գրում է. «Բայց եթէ ասիցէ որ, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտասցէ, զի ոչ յումեմէ ի լսելիս մեռ հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, և ոչ մեմ ի պատմութեանս հիւսել հաւանիմք» (Խոր., գիրք III, գլ. ԿԵ. ընդգծումը մերն է.—Ա. Ա.), թվում է, թե Խորենացին, ձեռքի տակ փաստեր շունենալով, հրաժարվում է Սահակի խոսքը ընդմիջարկել իր «Պատմության» մեջ, բայց դա այդպես չէ, քանի որ նա փաստորեն մի ուրիշ բան է ակնարկում՝ որ եթե Սահակի խոսքերը գոնե մի որոշակիությամբ հասնեին իրեն, ապա ինքը կգրեր այդ մասին և հավանաբար ուղղակի խոսքի միջոցով՝ Քանի որ, փաստորեն, նա Սահակի բերանում այնուամենայնիվ դնում է այդ ուղղակի խոսքը, հակասելով իր վերոբերյալ հավաստիացմանը (տառացիորեն մեկ պարբերություն առաջ, երբ այդ նույն պարսից ատյանում պարսից արքա Վռամը Սահակին դրամ է առաջարկում նրա պերճախոսության համար, Սահակը ուղղակի խոսքով դիմում է Սուրենյան Պահլավին), սա մեկ անգամ ևս վկայում է, որ Խորենացու մոտ ընդմիջարկված նամակները լավագույն դեպքում քաղված են ի լրո:

Նման հակասությունները հենց միտումնավոր գրված հորինովի նամակների մի ուրիշ տարբերակիչ հատկանիշներն են: Հակասությունները հորինովի նամակի գրության պրակտիկայում որոշ իմաստով անխուսափելի են: Ահա նման հակասությունների ևս մի օրինակ Խորենացուց. «Բայց Սամուելի Մամիկոնենի յինքն ըմբռնեալ զթուղթն խոսրովու և զպատճէն թղթոյն նախարարացն՝ զատուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկադ: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուհի, և երկընչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զատչել ի Յունաց: Իսկ Արկադայ բարի արարեալ նմա, հրամայէ զհաւասար թղթոցն հելլէն գրով ի դիւանի իւրում դնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց. ու կայ միմէն ցայսօր» (Խոր., գիրք III, գլ. ԽԸ. ընդգծումը մերն է.—Ա. Ա.): Որտե՞ղ է կարդացել, ուրեմն, Խորենացին այդ թղթերը: Անհնար է, որ Խորենացին իր «Պատմության» համակարգում ընդմիջարկված ամեն թղթի առիթով այցելած ինչի Մերձավոր ու Միջին Արևելքի, Ալեքսանդրիայի ու Հռոմի բազմաթիվ դիվանատները: Դրա կարիքը բոլորովին էլ չկար: Անտիկ մշակույթի մեծագույն գիտակ հայոց պատմահորը անպայմանորեն պետք է քաջածանոթ լիներ նամակների (այլև ճառերի) ընդմիջարկման անտիկ պատմագրության ավանդույթը, ըստ որի նույնիսկ անթույլատրելի և հակազեղագիտական էր պատմությունների (կամ գեղարվեստական վերարտադրության այլևայլ ոլորտների) համա-

կարգում պաշտոնական վավերագրերի (նամակներ, հրամանագրեր, պալատ-նադրեր և այլն) տառացի փոխադրությունը: Վերոբերյալ փաստի առիթով ասենք, որ ըստ հորենացու Սամվել Մամիկոնյանը թղթերն իր հետ պետք է տարած լինի ամենաուշը հոստովի թագավորության 1-ին կամ 2-րդ տարում, այն է՝ 385/386 (իսկ ըստ հորենացու՝ 388/389) թ.<sup>16</sup>: Այստեղ մեկ ուրիշ հակասություն էլ կա: հոստովը (384—392, ըստ հորենացու՝ 382—392 թթ.) դիմում է բյուզանդական կայսր Արկադիոս (395—408, ըստ հորենացու՝ 382—391), խնդրելով, որ իրեն վստահի նաև Հայաստանի հունական մասը (հոր., գիրք III, գլ. ԽԹ), և այդ խնդրքը հոստովը հայտնում է նախքան Սահակ Պարթևին Ասպուրակես եպիսկոպոսապետից հետո հաջորդ նշանակելը, այն է՝ ըստ հորենացու՝ 387 թ., մինչդեռ այդ ժամանակ բյուզանդական զահին նստած էր Թեոդոս Մեծը: Այս կերպ շատ նամակներ չեն գտնում իրենց հասցեատերերին կամ էլ հասցեատիրոջը հասնում են, բայց դրա կողքին ծագում է նամակագրի կեղծանունության խնդիրը:

Ժամանակախախտության (անաքրոնիզմ) այս երևույթը այն փաստերից մեկն է, որի միջոցով ճանաչվում է այս կամ այն նամակի հորինովիությունը: Ահա անաքրոնիզմի այլ փաստեր ևս հորենացու մոտ. բյուզանդական կայսր Հուլիանոսը (Ուրացող, 361—364, ըստ հորենացու՝ 336—341 թթ.) նամակ է գրել հայոց Տիրան թագավորին (343—353, ըստ հորենացու՝ 328—339 թթ.), իսկ Սասանյան արքա Շապուհ II Երկարակյացը (309—379 թթ.) Տիրանին գրած իր նամակում ակնարկում է Տիրանի և Հուլիանոսի միջև կատարված մի գործարքի մասին (հոր., գիրք III, գլ. ԺԵ—ԺԶ): Եզրակացություն I. հորենացու մշակած ժամանակագրության սահմաններում վերոհիշյալ փաստը անհակասական է ու իրական, բայց այն չի համապատասխանում Մալխասյանցի ու Գ. Սարգսյանի կազմած ստույգ ժամանակագրական աղյուսակների տվյալներին:

Մի այլ տեղ Սասանյան Շապուհ II-ի որդի Արտաշիր II-ը (379—383 թթ., հորենացու մոտ նույնն է) նամակ է գրում հայոց Վռամշապուհ թագավորին (392—414 թթ., հորենացու մոտ նույնն է): Մինչդեռ հորենացին ինքն էլ մինչև Վռամշապուհի թագավորելը Հայաստանում, պարսից մասի համար Արտաշիր II-ից հետո ղնում է Սասանյան մեկ ուրիշ արքայի՝ Վահրամ III Կրմանի (ըստ Մալխասյանցի, իսկ ըստ Գ. Սարգսյանի՝ Վահրամ IV Կրման) գահակալությունը (որ է ըստ հորենացու՝ Վռամ I Կրման): Մալխասյանցը, ելնելով այս հարցում առավել ստույգ աղբյուրների տվյալներից, Արտաշիր II-ի (379—383 թթ.) և Վահրամ III Կրմանի (388—392 թթ.) միջև՝ 383—388 թթ. ղնում է Շապուհ III-ի գահակալությունը: Այսպիսով, Շապուհ III-ին հաջորդող Վահրամ III (ըստ Գ. Սարգսյանի՝ Վահրամ IV) Կրմանի թագակալության 5-րդ տարում միայն, այն է՝ 392 թ., հայոց վրա թագավորում է Վռամշապուհը: հորենացին ի մի է ձուլում պարսից երկու տիրակալներին՝ Շապուհ II Երկարակյացին և Շապուհ III-ին՝ մեկ Շապուհ անվան տակ, որի որդին է համարում Արտաշիր (կամ Արտաշես) II-ին (379—383 թթ.), որից հետո, ըստ հորենացու, գահակալում է Վռամ Կրմանը (Վահրամ III Կրման)՝ 388—399 թթ.: Եզրակացություն II. հորենացու իսկ մշակած ժամանակագրական համակարգում, որ տվյալ դեպքում հիմնականում համապատասխանում է գիտական ժամանակագրությանը, վերոբերյալ վկայությունը հակասական է ու սխալ: Եզրակացություն III. Մի երրորդ դեպքում էլ նամակը չի հասնում իր հասցեատիրոջը ըստ իր իսկ՝ հորենացու ժամանակագրական աղյուսակի, իսկ իրականում, հաջորիտ

<sup>16</sup> Ստույգ ժամանակագրության և հորենացու կազմած ժամանակագրության առնչակցության այս և ստորև հիշատակելիք տարեթվերը քաղված են Ստ. Մալխասյանցի (Մովսես և հորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1981) և Գ. Սարգսյանի (Մովսես հորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը. Երևան, 1965) աշխատություններում կազմած ժամանակագրական աղյուսակներից:

ժամանակագրական համակարգի տվյալներով, այդ նամակը հնարավոր է, որ գրվեր: Այսպես. Թեոդոս Մեծը (ըստ խոր. 356—382 թթ.) նամակ է գրում հայոց Սահակ կաթողիկոսին (կաթ. ըստ խոր. 387 թվականից), որ բնականաբար անհեթեթություն է, մինչդեռ իրականում Թեոդոսը թագավորել է 379—395 թթ., Սահակը կաթողիկոս է դարձել 387-ին, և նա կարող էր նամակ ստանալ Թեոդոսից: Սրանք են մեր երեք հիմնական եզրակացությունները:

Փաստերը վկայում են, որ խորենացին, գոնե որոշ թղթերի առնչությամբ, պաշտոնական վավերագրերից չի օգտվել, որովհետև հակառակ դեպքում նա թույլ չէր տա նման կարգի անճշտություններ՝ «շփոթելով» նամակագիրների անունները և, հետևաբար, ընկնելով անաբրոնիզմի մեջ: Ուրեմն խորենացին ինքն է հորինել այդ թղթերը կամ էլ, որոշ դեպքերում, գուցե բանավոր աղբյուրներից է օգտվել:

Լեզվաոճական առումով նամակները ոչնչով չեն տարբերվում կամ էլ շատ քիչ են տարբերվում հեղինակային շարադրանքից: Ոճական նույնությունը առկա է նաև տարբեր դարաշրջանների և տարբեր ազգություն. ու կոլտորանքների ներկայացուցիչների՝ ընդմիջարկված նամակներում: Սա մեկ անգամ ևս ապացուցում է նամակների հորինովիությունը, ազատ վերաշարադրությունն: Լինելը: Բայց սա նաև վկայում է, որ թղթերի ընդմիջարկման խնդրում խորենացին խստիվ հետևել է անտիկ պատմագրության ավանդույթին:

Շատ նամակների հորինովիությունը երևում է նաև նրանցում ուժեղ արտահայտություն գտած խրատական-ուսուցողական ենթոլորտից: Նման միտում են հետապնդում Եղիշեի և Ղազար Փարպեցու մոտ պահպանված Հազկերտի հրովարտակը և հայերի գրած պատասխանները: Խնդիրն այն է, որ այդ երկու հեղինակներն էլ պատմական վերոհիշյալ փաստաթղթերը այնպես են կերպար-փոխել իրենց պատմական գրվածքներում, որ գրեթե անհնարին է որևիցե ձևաոճական գոնե մի հեռավոր նմանություն գտնել այդ, թվում է թե նույն աղբյուրից ծագած փոխադրությունների միջև: Ծճարտությունն այն է, սակայն, որ պատմական այդ փաստաթղթերը միայն միջոց են ծառայել հեղինակների կողմից սեփական կրոնի ջատագովությունն անելու համար: Հենց այս պատճառով էլ Հազկերտի (Եղիշեի մոտ՝ Միհրանեսի) հրովարտակը երկուսի մոտ էլ շատ ավելի փոքր ծավալ ունի, քան հայոց գրած պատասխան թուղթը: Վերջինս, եթե Փարպեցու մոտ քիչ թե շատ չափավոր ծավալի մեջ է դրված, ապա Եղիշեի մոտ խիստ երկար է և իր մեջ ներառել է մագդենականության և քրիստոնեության ողջ համայնապատկերը (Եզնիկ Կողբացու «Եղծի» հատվածների օգտագործման պարագան Եղիշեի այս թղթերում ապացուցված է): Տվյալ նամակի կրկնակի ավանդումը ևս պարզորոշ ցույց է տալիս նրա հորինովիության փաստը: Սա ևս կարելի է նամակի հորինովիությունը որոշող մի փաստարկ համարել: Բնական է, որ Եղիշեի մոտ հայերի գրած պատասխան թուղթը շատ ավելի երկար է, քան Ղազարի մոտ, որովհետև այդ թղթի միջոցով Եղիշեն փաստորեն տվել է իր հիմնանյութը հանդիսացող Վարդանանց հերոսամարտի հավատո հանգանակը՝ դավանաբանական նամակին բնորոշ վերացարկումներով հանդերձ: Իսկ Փարպեցու համար այդ թուղթը շունի այն նույն հրատապությունը և կարևորությունը, ինչ որ Եղիշեի համար է, այդ իսկ պատճառով էլ Ղազար Փարպեցու մոտ այն ավելի սեղմ է, փոխարենը ծավալուն են Վահանի ճառերը «Հայոց պատմության» ողջ շարադրանքում:

Մի ուրիշ կերպ էլ կարելի է ապացուցել տվյալ նամակի հորինովիությունը: Դրա համար անհրաժեշտ է, որ առնվազն մեկ ուրիշ աղբյուրով էլ ավանդված լինեն այն հեղինակի գրությունները, որից ուղղակի վկայակոչումներ են արվում այս կամ այն պատմիչի մոտ: Օրինակ, եթե համադրելու լինենք Մովսես խորենացու մոտ պահպանված Սահակ կաթողիկոսի երեք թղթերը «Գիրք թղթոցում» նույն հեղինակի անունով մեզ ավանդված երեք այլ թղթերի հետ, միանգամից աչքի կգարնի այդ թղթերի երկու եռյակների միջև գոյություն ունեցող չեզձառական և նամակագրական սկզբունքների ակնհայտ տարբերությունները:

փաստը: Եթե հորենացու մոտ Սահակի թղթերը ոճի առումով չեն տարբերվում հեղինակի ոճից և խիստ համառոտ գրություններ են, ինչպես հորենացու մեջ-  
բերած բոլոր մյուս թղթերը, ապա «Գիրք թղթոց» ժողովածուում դրանք խիստ  
երկարաշունչ են և աչքի են ընկնում դավանաբանական նամակներին հատուկ  
ոճով: Իհարկե, սկզբունքորեն հնարավոր է, որ տարաբնույթ նյութերի մասին  
գրող հեղինակը տարբեր լեզու և ոճ բանեցնի, բայց, այնուամենայնիվ, հորե-  
նացու սեղմ ոճի հատկանիշների գոյությունը ապացուցելի է Սահակի թղթե-  
րում: Ստ. Մալխասյանցը հորինովի է համարում հորենացու մոտ պահպանված  
Սահակի թղթերն ու դրանց պատասխանները և ավելացնում է. «...ուստի կայս-  
րի և պատրիարքի մեղադրությունները, որ Սահակ փոխանակ Հունաստան դի-  
մելու աննշան ասորիներին է դիմել գրերի գյուտի համար, չի կարելի չհամարել  
նույն հորենացու հայացքը, որ Հունաստանը ճանաչում էր մայր կամ դայակ  
իմաստություն<sup>17</sup>: Մի ուրիշ դեպքում նա, ի միջի այլոց նկատելով, որ հորե-  
նացու (ինչպես նաև Եղիշեի ու Փարպեցու) մոտ պահպանված նամակները պետք  
է որ անվավեր, հորինովի լինեն՝ միաժամանակ անհրաժեշտ է համարում վեր-  
ջիններին լուրջ ուսումնասիրությունը. «Բայց այդ նամակներն ուրիշ հետաքր-  
քըրական կողմ ունեն.— նրանցից երևում է, թե ինչպես է հորենացին պատկե-  
րացնում հիշյալ թղթակիցների փոխադարձ հարաբերությունը, ինչպիսի տիտ-  
ղոսներ են կրում իրենք կամ տալիս են իրենց թղթակիցներին. արդյոք մտեր-  
մա՞վ են այդ հարաբերությունները, թե պաշտոնական, իբրև հավասարնե՞ր  
են գրում միմյանց, թե իբրև պետք ստորագրելին կամ ստորագրյալը պե-  
տին...»<sup>18</sup>: Այս և մի շարք այլ հարցեր խիստ կարևորվում են նաև անվավերա-  
կան, հորինովի թղթերի կապակցությամբ: Հույն գիտնական Սիկուտրիսը այս  
առիթով գրում է. «Վավերականության հարցը միակը չէ, որ կարելի է թղթերի  
առնչությամբ ուսումնասիրել: Նույնիսկ այն դեպքում, երբ հաստատված է հո-  
րինովիությունը, հարկ է հետազոտել այդ նամակների գրության դրդապատ-  
ճառները, աղբյուրները, կատարման եղանակներն ու ձևերը»<sup>19</sup>:

V դարի հայ պատմագրության մեջ հանդիպող գրեթե ցանկացած թղթի  
համար կարելի է պարզել այն հարցը, թե ի՞նչ նպատակով է գրված այն, և թե  
դրանով ի՞նչ է ցանկացել ասել տվյալ պատմագիրը: Որովհետև պատմություն-  
ների համակարգում ընդմիջարկված այս կամ այն նամակը, որպես ոճական  
ինքնուրույն միավոր, ունի իր նախագաղափարը և որոշ պարագաներում շատ  
հեշտ է ցույց տալ նրանց գրության դրդապատճառները՝ մանավանդ, երբ հար-  
ցը կապվում է տվյալ պատմիչի գեղագիտական իդեալի հետ:

Հորենացու կողմից իր «Պատմություն» համակարգում թղթերի օգտագործ-  
ման առնչությամբ առաջիմ բանասիրության մեջ ապացուցված է համարվում  
միայն Աբգարի թղթերի այլ գրավոր սկզբնաղբյուրներից փոխադրության պա-  
րադան: Այն, որ հորենացին դրանք քաղել է իր իսկ կողմից հիշատակած ասորի  
լաբուրենայի (ըստ հորենացու՝ Ղերութնա) և Եվսեբիոս Կեսարացու աշխատու-  
թյուններից, մեզ հիմք չի տալիս կարծելու, թե նա նույն կերպ է վարվել նաև իր  
մյուս թղթերի առնչությամբ, որովհետև բանասիրության մեջ ապացուցված է,  
որ Աբգարի թղթերի վավերական սկզբնաղբյուր համարված Լաբուրենայի երկա-  
սիրությունը հենց ինքնին անվավեր է, որ Լաբուրենան Աբգարի ժամանակակիցը  
չէ, այլ III դարի հեղինակ է, և որ այդ թղթերն էլ հենց հորինվել են III դարում  
և դուրս ջատագովական նպատակ են հետապնդել: Այս է վկայում համաշխար-  
հային քրիստոնեական մշակույթի գործիչների կողմից այդ թղթերին հաճախա-  
կի անդրադառնալը և մանավանդ այն ժամանակ, երբ ջատագովական միտումը,  
պատմական այս կամ այն ժամանակաշրջանում (երբ դրվել է քրիստոնեական  
եկեղեցու պաշտոնական ճանաչման հարցը) թելադրել է այդ թղթերի վկայա-

<sup>17</sup> Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Հայոց պատմություն, էջ 387:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>19</sup> J. Sykutres. Op. cit., S. 213.

կոշման կարևորությունը: Ջատագովական միտումը պարզորոշ երևում է բոլոր այդ փաստաթղթերն օգտագործած քրիստոնեական գործիչների մոտ, սկսած՝ Լաբուբենայից (III դար), Եվսեբիոս Կեսարացուց (IV դար) ու Մովսես Խորենացուց (V դար) մինչև Կոստանդին Միրանաթին (IX դար), Ուիստանես եպիսկոպոս (X դար), Մխիթար Անեցի (XIII դար) և ուրիշներ: Ճանաչողական և պատմական փաստերին հավաստիություն հաղորդելու կնիքն ունեցող այս փաստաթղթերի՝ Խորենացու կողմից համեմատաբար տառացի փոխադրությունը և նրանցում այնուամենայնիվ կատարված մասնակի փոփոխությունները մի կերպի են անգամ գալիս են ապացուցելու, որ Խորենացին, իրոք, նույն ջատագովական միտումից ելնելով, այդ, նույնիսկ անվավերական, բնագրերի նկատմամբ ազատ մոտեցում է ցուցաբերել: Այդ ջատագովական միտումի հետ են կապված նամակների բնագրերում Խորենացու ձեռքով կատարված մի շարք փոփոխությունների փաստերը, ինչպիսիք են՝ «Աբգար Արշամայ» (բնագրում՝ «Աբգամ», որ նշանակում է սև), առ Տիրեբ հասցեագրված թղթում՝ «Աբգար Հայոց թագաւոր» (բնագրում՝ «Աբգար թագաւոր Ասորեստանուց և Հայոց») և այլն: Հարկ է ասել, որ Խորենացու մոտ նամակի կառուցման սկզբունքները և նամակագրական ներուճը ստացին միավորները գտնվում են քարացած, անշարժ վիճակում: Նամակային ձևը ոչ մի զարգացում կամ փոփոխություն չի ապրում պատմական ժամանակաշրջանների աստիճանական անցումների ընթացքում: Մինչդեռ «Պատմության» մեջ նամակների վկայակոչությունները վերաբերում են սկսած նախապատմական ժամանակներից՝ Աթա հակի թուղթը Տիրանին, ընդհուպ մինչև V դարը՝ Սահակ կաթողիկոսի թղթերը: Խորենացուն ծանոթ է նամակի կառուցման միայն մեկ ընդհանրական սկզբունք: Եթե այդ սկզբունքի կիրառության նախօրինակը համարելու լինենք Աբգարի թղթերի կառուցվածքային-ձևական, բովանդակային ու տիպաբանական հատկանիշների ամբողջությունը, ապա կարող ենք ասել, որ Խորենացու մեջբերած բոլոր մյուս նամակներն էլ կառուցված են այդ նույն ընդհանրական սկզբունքներով և գրեթե ոչ մի որակական կարգի շեղում նրանցում նկատելի չէ: Սա մեկ անգամ ևս գալիս է ապացուցելու Ս. Մալխասյանցի միտքը, որ Խորենացին (այլև մյուսները) գրել է այնպես, ինչպես այդ հեղինակները գրելու կլինեին, եթե իրոք գրեին:

Խորենացու կողմից իր «Պատմության» համակարգում նամակի ժանրի փաստաթղթերի կիրառության եղանակները ամենասերտ կերպով կապվում են նրա դեղագիտական ու պատմագիտական ըմբռնումների հետ: Խորենացու մոտ նամակագրական փաստերի օգտագործման եղանակների առնչությամբ կարելի է առանձնացնել երեք հիմնական խմբեր: Մի դեպքում Խորենացին, գրեթե տառացիորեն, բայց և այնպես որոշակի միտվածությամբ ու նպատակով իր «Պատմության» մեջ է փոխադրում նամակային նյութը (Աբգարի թղթերը), երկրորդ դեպքում՝ անտեսելով նամակային ձևը, պարզապես վերաշարադրում, վերապատմում է նամակային կոնկրետ փաստի տրամադրած նյութը (այս երևույթը վկայված է միայն մեկ օրինակով՝ «Յայտարարութիւն սակաւութ սննդեան և վարուց Գրիգորի և որդւոցն, ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնաւորի ի Յագոռճանի» (գիրք II, գլ. Բ): Եվ երրորդ դեպքը, որը կազմում է Խորենացու «Պատմության» համակարգում ընդմիջարկած թղթերի գերակշիռ մասը (2 տասնյակից ավելի)՝ հորինովի թուղթն է:

Խորենացին խստորոշ հետևում է անտիկ նամակագրության մեջ մշակված սկզբունքներին: Խորենացին ճանաչում է նամակագրական միավորների աստիճանական կարգության միայն մեկ և ամենատարածված ընդհանրական սկզբունքը, այն, որ նամակը (մասնավորապես պաշտոնական նամակը) բաղկացած է թղթառաջից, բուն նամակային տեքստից կամ հաղորդումից և վերջաբանից (հորդորակ կամ կատարած): Սա բացառապես անտիկ նամակագրական ավանդույթի հատկանշական կողմն է: Նամակի գրության բոլոր այս երեք մասերի գործառնությունը հիմնականում խիստ կայուն ու պարտադիր է նաև V դարի մեր մյուս պատմիչների (Ագաթանգեղոս, Նիդիշ, Փարպեցի) պատմությունների համակարգում եղած պաշտոնական նամակներում:

Պատմիչների կողմից վկայակոչված պաշտոնական փաստաթղթերի գրության գերազանցապես նամակային ձևը և նամակային իրադրությունը (նամակադիր-հասցեատեր հարաբերությունը) ինչ-որ տեղ միանգամայն համահարթել են այն բոլոր մասնավոր կարգի տարբերությունները, որ գոյություն ունեն պաշտոնական գրագրությունների տարբեր ենթախմբերի միջև, ինչը լավագույնս երևում է V դարից մեղավանդված կոնկրետ նամակագրական նյութից: Այն, որ V դարի հայ պատմագիրները տարաբնույթ պաշտոնական փաստաթղթերին (հրամանագրեր, պատվիրագրեր, արտոնագրեր, լիազորագրեր, խնդրագրեր, հավատարմագրեր, զանազան բնույթի հանձնարարականներ, ծանուցագրեր և այլն) տվել են հիմնականում միևնույն նամակային կերպարանքը՝ անտեսելով նրանց ձևական յուրահատկությունները, այս փաստը ևս խոսում է հորինովիության կամ էլ գոնե ժանրային համահարթեցումների մասին:

Խորենացու կողմից նամակների հորինման կամ վերակազմության պարագան ինքնին վկայում է անտիկ նամակագրության փորձի հետ նրա ունեցած սերտ շփումների մասին: Անտիկ նամակագրության փորձի և տեսության մեջ մշակված հիմնական սկզբունքները ընկած են V դարի հայ պատմագրության և սուավելապես Մովսես Խորենացու երկասիրությունների մեջ տեղ գտած պաշտոնական գրագրությունների հիմքում: Այդ վերաբերում է ինչպես նամակի ընդհանուր տիպաբանական բնութագրին, ոճական գեղաձևումների խնդրին, այնպես էլ՝ նամակի կոնկրետ մասերի կառուցման առանձին սկզբունքներին: Անտիկ նամակագրության տեսությունից ու փորձից V դարի հայ մշակույթ են ներմուծվել այնպիսի առանձնահատուկ ձևաոճական նամակագրական սկզբունքներ, ինչպիսիք են՝ պարզությունը (ἁπλότης), համառոտությունը (συνοψία) նորագեղությունը (καλλιέργεια), միջին ոճի կամ բնականության (τὸ φυσικόν) պահանջները և այլն: Այս փաստը խոսում է ընդհանուր նամակագրական հոլովումում V դարի հայ պաշտոնական նամակագրության խաղացած յուրահատուկ դերի ու նշանակության մասին (որովհետև անտիկ նամակագրության ավանդույթը VI և հետագա դարերում իր տեղը զիջում է առաքելական թղթերի ավանդույթով կաղապարվող և գուտ միջնադարյան նամակագրության սկզբունքներով առաջնորդվող նամակների կազմության արվեստին):

V դարի հայ պատմագրության մեջ վկայված նամակագրական փորձի սկզբունքները գլխավորապես խարսխված են անտիկ նամակագրության ավանդույթի վրա՝ համաքրիստոնեական, առավելապես մերձավորարևելյան նամակագրության ինչ-ինչ բնորոշ գծերի համագրությամբ: Ընդհանրապես նամակագրությունը խիստ ավանդական բնույթ ունի, և ամեն կոնկրետ նամակի առիթով դժվար է ցույց տալ նամակագրի անհատական կամ նույնիսկ ազգային բնութագիրը: Պաշտոնական նամակագրության առնչությամբ այս պարագան առավելազույնս նկատելի է դառնում: Պաշտոնական նամակ պատմամշակութային երևույթը, բացի իր խիստ գործառնական դրսևորումներից ու փաստագրական նշանակությունից, V դարի հայ մեծագույն գեղագետ պատմագիրների գրչի ներքո ձևեր է բերել յուրահատուկ գրական-գեղարվեստական միավորի արժեք, որը մեծ չափով պարմանավորված է հեղինակային հորինումների, պարզ վերաշարադրումների, ազատ փոխադրությունների հանգամանքով: Կրկնում ենք, փաստագրական նյութի նմանօրինակ կերպարանափոխված ավանդման եղանակը ոչ միայն չէր քննադատվում անտիկ ու միջնադարյան գեղագիտական ու պատմագիտական ըմբռնումների տեսակետից, այլև, ընդհակառակը, ամեն կերպ խրախուսվում էր և փաստագրական մանրամասների հարստացումն ապահովող այդօրինակ միջոցառումներից օգտվելու պահանջ էր դրվում: Այս երևույթը, սակայն, հետագա դարերում հայոց մեջ գտնում է իր հակոտնյա գաղափարաբանության պաշտպաններին:

ОФИЦИАЛЬНЫЕ ПИСЬМА В СИСТЕМЕ АРМЯНСКОЙ  
ИСТОРИОГРАФИИ V ВЕКА И ПРОБЛЕМА ИХ ПОДЛИННОСТИ

А. В. АЛЕКСАНИЯ

## Резюме

В числе эпистолярных произведений V века наибольшее количество составляют официальные документы в форме письма, которые дошли до нас в исторических сочинениях.

Армянские историографы V века были хорошо знакомы с «письмом» как важнейшим средством в осуществлении административного управления внутри- и внешнеполитического характера. По своему типу вся эта официальная переписка имеет юридическую целенаправленность, а по особенностям функционального характера их можно отнести к двум подгруппам: а) официальные документы в форме письма, относящиеся к внутриадминистративным проблемам и б) официальная переписка с внешнеполитическими кругами, также написанная в форме письма.

Принципы эпистолярного опыта, засвидетельствованные в историографии V века (особенно в связи с письменными произведениями, нашедшими место в «Истории Армении» Мовсеса Хоренаци), главным образом основаны на традиции античной эпистолографии—в синтезе с некоторыми особенными чертами общехристианской (большей частью ближневосточной) эпистолографии. Официальное письмо как культурно-историческое явление, кроме своего фактографического значения, под пером великих армянских эстетов-историографов V в. получило значение своеобразной литературно-художественной единицы. Это большей частью обусловлено обстоятельствами авторских сочинений и свободным воспроизведением и изложением письменного материала. Официальные документы-письма, вставленные в систему армянской историографии V в., своеобразно обогащают и иллюстрируют историографический материал, как бы оживляют процесс передачи авторами исторических явлений.